

ՅԵՏԵՒԻՆՔ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒԽ

Եղբայրներ, շատ խրատող եւ ուսուցանող մի ըլլաք գիտնալով, որ աւելի մեծ դատաստան պիտի ընդունիք, որովհետեւ ամէնքս ալ բազմաթիւ յանցանքներ կը գործենիք: Կատարեալ մարդք այն է, որ խօսքով չի մեղանչեր եւ մանաւանդ կրնայ իր ամբողջ մարմինը սանձահարել... (Յակ. Գ. 1-16):

Սիրելիներ, զգուշութեամբ ընտրութիւն կատարենք իմաստութեանց մէջ չըլլայ, թէ նշմարիս իմաստութեան հետքերէն շեղելով մոլորինք եւ երկրաւոր, շնչաւոր ու դիւական իմաստութեան ետեւէն երթանք:

Ես միշտ կը զարհուրիմ եւ կը տագնապիմ ամխոտրաբար մեր բոլորին մէջ տեսնելով այս իմաստութեան պատճառները: Մենք, որ կը թուինք բան մը ըլլալ եւ մարդոց աչքերուն կեղծելով մենք զմեզ աղտերէ ազատ կ'ուզենք ցոյց տալ, ո՞վ չարիք, ահա ուամիկէն աւելի անարգ կը գտնուիք: Այս բոլորին վրայ իմաստուն վարդապետին հովեր կու տանք մենք, երբ աշակերտի աստիճանի վրայ իսկ չենք գտնուիր, որովհետեւ անկարգաբար կ'յինանք ամէն տեսակ չար ախտերու՝ նախանձի ու դառնութեան, կոիւի ու չար գրգութեանց, հպարտութեան եւ ամբարտաւանութեան, փառասիրութեան, ագահութեան եւ արծաթասիրութեան, շողոգորբութեան, ատելութեան եւ ոխակալութեան, սուտերդումի եւ արբեցութեան, շողորբութեան, ատելութեան եւ ոխակալութեան ու այլ բաներու մէջ:



ՍՊԱ




Եկեղեցիներէն ներս, որեւէ անօրկամ զարդ, որ արարողութեան ծառայութեան համար կը գործածուի, կը կոչուի սպաս:

Այս հասկացողութեամբ Խաչը, Սիոննարափ աղաւանին, ճաճանչներն ու Ս. Ստեղանի զանազան զարդերը սպասներ են:

Սպասներն են, նաեւ եկեղեցական զգեստները՝ փիլոն, շուրջար եւ վերջապէս Ս. Պատարագի Խորհուրդին համար պատրաստուած մասն ու նշխարիը:

Ուրեմն սպասներ կան առօրեայ ընթացիկ ծիսակատարութեանց վերապահուած եւ Սրբազն սպասներ, որոնց վերապահուած է նուիրական անօրներ կամ նիւթեր դառնալու եկեղեցական, թէ հաւատացեալներու հոգեւոր կեանքին մէջ:



ՅՈՒ ԽՈՎԵՐ ԻՆ ՈՅԵՐՈՒՄ ՑՈՎ Է ՈՒ ԽՈՎԻՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ա. 119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ 2022

ԹԻՒ 47

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՏՈՒԱԾԱՀՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 29.11.20: Փլ. 4.8-24: Ղկ. 11.1-13

ԱԽԵՏԱՐԱՆ ՀԱՏ ՂՈՒԿԱՍՈՒ 11.1-13

Պատահեցաւ, որ Յիսուս տեղ մը կ'աղօթէր: Երբ աղօթելը վերջացուց, իր աշակերտներէն մէկը ըսաւ. «Տէ՛ր, մեզի աղօթել սորվեցո՛ր, իմչպէս որ Յովհաննէս իր աշակերտներուն սորվեցուց»:

Յիսուս ըսաւ. «Երր կ'աղօթէ՛ր, ըսէ՛ր. Հայր մեր երկնաւոր, սրբառանուի անունդ, քող գայ արքայութիւնդ, քող կատարուի ժու կամֆդ, ինչպէս որ երկինքի մէջ, այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը շնորհէ՛ մեզի օրէ օր: Եւ ներէ՛ մեր մեղքերը, ժամի մենք ալ կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ քոյլ մի՛ տար, որ փորձութեան մէջ իյնանք, այլ մեզ չարէն ազատէ»:

Եւ ապա շարունակեց. «Ենթադրենք, թէ ձեզմէ մէկը բարեկամ մը ունի, որուն կը դիմէ գիշեր ատեն ու կ'ըսէ. “Բարեկամ, ինծի երեք հաց փոխ տո՛ւր, որովհետեւ նամբորդ բարեկամ մը տունս իշեւանցաւ եւ ես հրամցնելիք բան չունիմ”»: Անիկա ներսէն կը պատասխանէ ըսելով. “Մի՛ յոգնեցներ զիս. դոները արդէն իսկ գոցած եմ եւ փոքրիկներս ժովս անկողինին մէջ են. հետեւաբար չեմ կրնար ելել տալ ժեզի”: Վատահ երէ՛, որ նոյնիսկ երէ բարեկամութեան սիրոյն չելլէ եւ անոր ուզածը չտայ, սակայն թախանձանքներուն տեղի տալով պիտի կատարէ անոր խնդրանքը: Եւ ես կ'ըսեմ ձեզի. Խնդրեցէ՛ Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտոնեցէ՛ եւ պիտի գտնէ՛, բախեցէ՛ եւ պիտի բացուի ձեզի: Որովհետեւ խնդրողը պիտի ստանայ, փնտոնդը պիտի գտնէ եւ բախողին առջեւ դուռը պիտի բացուի: Ձեր մէջ կա՞յ հայր մը, որուն զաւակը ձուկ ուզէ եւ ինք ձուկի փոխարէն օճ տայ եւ կամ կարին տայ՝ երբ զաւակը հաւկիթ խնդրէ: Արդ, դուք, որ այսքան չար է՛ եւ գիտէ՛ ձեր զաւակներուն լաւ պարգևներ տալ, վատահ եղէ՛, որ ձեր երկնաւոր Հայրը շատ աւելի լաւ պարգև մը՝ Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որոնք իրեն կը դիմնեն»:

ՅԻՄՆԱԿԻ

Յիսուսկ բառը կը վերաբերի յիսուն թիւն: Ան իրապէս ալ յիսուն օրերու վրայ երկարող ժամանակամիջոց մըն է, որ կը կանի Աստուածայայտնութեան կամ Ծննդեան տօնը: Իրապէս ալ, Յունար 6-էն դէպի ետ համրելով յիսուն օրեր, մենք պիտի յանգինք նոյեմբեր 18-ին, որ Յիսուսկի առաջին օրն է:

Հայաստանեայց Եկեղեցին կը տօնէ Բարեկենդան Յիսուսկաց Պահոց, այսինքն՝ Յիսուսկի առաջին օրուան ամենէն մօտ զուգադիպող Կիրակին:

«Ընծայումն Ա. Աստուածածնի»

Հստ աւանդութեան, Մարիամ Աստուածին զաւակն էր Յովակիմի եւ Աննայի: Ան ուխտով ստացուած զաւակը լրացրւն համար ծնողքը՝ իրենց ուխտին համաձայն, Մարիամը ընծայած են տաճար, երբ ան երեք տարեկան էր, որպէսզի հոն աստուածապաշտութեամբ զարգանայ ու տաճարին ծառայէ:

Այս նուիրման օրն է, որ կը յիշատակուի Աստուածածնի ընծայման օրը, որ կը կատարուի ամէն տարի անշարժ թուականի մը, Նոյեմբեր 21-ին, որ օրն ալ հանդիպի այդ թուականը:

Ընծայման տօնը Աստուածածնի նուիրուած տօներէն մէկն է: Անկէ անկախ՝ կան նաեւ Աստուածածնի կեանքն ու տիպարը ծանօթացնող եւ յիշատակող այլ տօներ, ինչպէս՝ Յղութեան տօն, Ծնունդ Ա. Աստուածածնի, Աւետում, Վերափոխում, Գիւտ գօտիի եւ Գիւտ տուփի:

ՀԱՅՈՒՄ ՊԱՏՎԱԽԱՎԱ ԲԱԺԻՆ

Ի՞ՆՉ Է ԱՂՈԹՔԸ

Աղօքը լեզուն է երկինքին ու անոր սուրբ Պահակալին: Առանց այդ լեզուն զիտնալու չենք կրնար Աստուածոյ հետ հաղորդակցութեան ու յարաբերութեան մէջ ըլլալ: Աղօքը, մեր երկնաւոր Հօրը թեւերուն տակ մտնել է: Աղօքը, մեր հոգիին հաղորդակցութիւնն է Սուրբ Հոգիին հետ: Աղօքը, մեր սրտին միացուն է Յիսուսի սրտին հետ:

Աղօքը արարածին երկխօսութիւնն է իր Արարիչին հետ: Ահա, թէ ինչու հաւատացեալ մարդը պէտք է զգուշանայ մենախօսութենէն աղօքի պահուն: Ի՞նչ պիտի ընէիր, եթէ քովդ մէկը զար եւ մէկ ժամ խօսէր եւ ապա ձգէր երբար, առանց առիթ տալու քեզի, որ բառ մը ըսէիր: Աղօքի պահուն, հաւատացեալ մարդուն նպատակը պէտք է ըլլայ Աստուածոյ ծայնն ու խօսքը լսելը, եւ ո՛չ թէ իր ծայնն ու խօսքը Աստուածոյ լսելի դարձնելը: Աւելի կարեւոր է, որ մենք լսենք Աստուածոյ ծայնը քան Աստուած՝ մեր ծայնը, որովհետեւ Աստուած արդէն զիտէ, թէ ի՞նչ պիտի խնդրենք ու ի՞նչ պիտի ըսենք, մենք սակայն չենք զիտեր, թէ Աստուած ի՞նչ պիտի ըսէ կամ պատուիրէ: Ահա, թէ ինչու յատուկ ճիզ պէտք է բափենք սրելու ու մարզելու մեր հոգիի ականջները, որպէսզի կարենանք լսել Աստուածոյ ծայնը:

ՅԻՍՈՒՄ ԱՂՈԹՈՂՆԵՐՈՒՄ Կ'ԸՆԿԵ.

«Երբ կ'աղօքն՝ մտիր սենեակն, զոցէ՝ դուռը եւ ծածուկ կերպով աղօքէ քու երկնաւոր Հօրը: Եւ Հայր, որ անտեսանելի է ու կը տեսնի կատարած, քեզի պիտի հասուցան յայտնապէս»:

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՏ ԳԱՍ

ԶԿԱՅ ՈՐԻՒՇ ԴՈՒՌ ՓՐԿՈՒԹԵՎՆ

«Ով, որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի» (Յհ. 10.9): Քրիստոս իր այս հաստատումով, ըսել չ'ուզեր, թէ ինք պարզապէս մէկն է, որ մարդիկը փրկութեան կը տանի: Իր ըսել ուզածը այն է, որ ինք մէկ եւ միակ ճամբան է փրկութեան: Ոչ ոք կրնայ փրկութիւն ձեռք ձգել առանց իրեն: Մտցնող անձը, անձը ուրկէ կը մտնենք եւ անձը ուր կը մտնենք՝ Յիսուս ինքն է:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Երբեմն մարդիկ հարց կու տան մեզի, թէ հեթանոսները պիտի փրկուի՞ն: Ես պիտի չպատասխանեմ այս հարցումին, այլ՝ պարզապէս պիտի յիշեցնեմ ձեզի Պողոս առաքեալին խօսքը. «Տէր Յիսուս Քրիստոսի հաւատայ եւ ամբողջ ընտանիքովդ կը փրկուիս» (Գրծ. 16.31): Այլուր առաքեալը կը հաստատէ, թէ կրնանք արդարանալ «միայն Յիսուս Քրիստոսի հաւատալով» (Գդ. 2.16): Այս եւ նման համարներ ցոյց կու տան, որ Յիսուս փրկութեան առաջնորդող դրուերէն մէկը չէ, այլ՝ մէկ եւ միակ դուռն է: Զկայ ուրիշ դուռ, որովհետեւ չկայ ուրիշ մէկը, որ խաչուեցաւ մեր փրկութեան համար:

ԵԹԵ ԿԱՄ ԵՐԱ Կ'ՈՒԶԵՍ...

**ԵԹԵ Կ'ՈՒԶԵՍ ԳԻՏԱՎ, ԹԷ ԿԱՏՈՒԾՈՅ
ԱՊԱՐԻՆՈՂ ԲԱՇ ՊԱՇՏՊԱՎՈՒԹԻՒՆ**

ԿՇԱ ԳՏԱՆ, ԿԱՐԴԱՌ ՍՊՎԱՐՈ

Աստուած է մեր ապաւենն ու զօրութիւնը, նեղութեանց մէջ շուտով հասնող օգնականը: Հետեւաբար մենք չենք վախնար նոյնիսկ, եթէ աշխարհը սարսի եւ լեռները իյնան ծովերուն խորհը: Նոյնիսկ, եթէ ալիքները շառաչեն ու փրփրին եւ լեռները դողան անոնց կատարողութենէն:

Գետ մը կայ, որ իր վտակներով կ'ուրախացնէ Աստուածոյ բաղաքը, բարձեալին սուրբ բնակարանը: Աստած ինք այդ բաղաքին մէջ է, ուստի անիկա անսասան է, որովհետեւ Աստած կ'օգնէ անոր՝ ամէն օր: Ինչքան ալ ազգեր խոռվի մատնուին, թագաւորութիւնները սասանին, բայց երբ Աստուած որոտայ՝ աշխարհն ամբողջ կը հալի:

Ամենակալ Տէրը մեզի հետ է, մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է: Եկէ, տեսէ՛ Տիրոջ գործերը, զարմանահրաշ գործերը, որ ան կ'ընէ երկրի վրայ: Աշխարհի չորս անկիւններուն՝ պատերազմները կը դադրեցնէ, աղեղները կը կոտրէ, նիզակները կը փշրէ, եւ վահանները կրակով կ'այրէ: «Դադրեցուցէ՛ ձեր կոխւները եւ նանցէֆ, թէ ե՞ս եմ Աստուածը, ե՞ս է որ կ'իշխեմ ազգերուն, ե՞ս կը տիրեմ աշխարհին»: Ամենակալ Տէր մեզի հետ է: Մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է: ՍՍՂՄՈՍՍԳԻՐՔ